



ՀԱԿՈՒ ՍՐԿ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

(Բ լսարան)

ԾՆՆԴԻՅԱՆ ՄԻ ԱՌԱՎՈՏ

Ծննդի առավոտ մըն է. ձյուն ձմեռ. գա-
վառի խորունկ ձմեռներից մին:

Խթման գիշերների անբացատրելի խռով-
քը սրտիս, ավետիսի վերջին հեռավոր ար-
ձագանքները ականջիս մեջ, ես ու մայրս
պատրաստվում ենք եկեղեցի գնալու: Լսվում
են եկեղեցու զանգերի քաղցրալուր դողանց-
ներ. դուրս ենք գալիս տնից:

Դրսում ծառերը մերկացած իրենց կանա-
չագեղ և երփներանգ զգեստներից, կքվել
էին ճերմակ ձյունի ծանրության տակ:

Ես՝ ինը տարեկան նորափեսոտ տիրա-
ցու, որ անգուսպ սիրով կապված էի եկեղե-
ցուն, իսկ մայրս՝ ջերմեռանդորեն ավանդա-
պաշտ հայ կնոջ տիպար մը, ձեռք-ձեռքի
բռնած քայլում ենք ձյունին մեջ, լուռ ու ա-
մայի ճամփով: Մութ է չորս կողմ. ձյունին
ճերմակն է, որ լուսավորում է գետինը:

Եկեղեցին, ուր առկածում են բազմաթիվ
մոմեղեն բոլքեր, պաշտամունքը սկսել է ար-
դեն: Ու լուսավառ, խնկալետ մթնոլորտի մեջ
ծփացող մշուշի միջից ժամկոտներն, իրենց
բազմոցների վրա կանգնած, երկրպագում են
ու խաչակնքում իրարից ոգևորվելով: Երբ
դպիրները տոնական օրերի իրենց թավջից
պատրաստված շապիկներով պնդված
«Խորհուրդ մեծ»-ը կերգեն, փոքրերի սուր
ձայները, խառնված մեծերի թավ ձայնին,
օդը կալելկոծի:

Պահարանի մեջ, պատից կախված, ու
հատկապես ինձ համար մորս կարած շապի-
կը հագնելով, կերթամ խառնվի դպիրներ
հոծ շարքին, զի ձայնս էլ խառնելով նրանց
երգին:

Պահ մը ուշադրությունս կգրավե անծանոթ
մի եկեղեցականի կիսադեմքը, որ վեղա-
ստվերի մեջ էլ ավելի խորհրդավոր կդառ-
նա:

Աչուկներս խոշոր կբանամ՝ ավելի լավ
տեսնելու համար այդ անծանոթ վեղարավո-
րին, որ երբեք չի նմանիր ճերմակ մեր թեմի

առաջնորդին. իրավ որ նրա պես հաղթա-
հասակ է ու քաջակամ: Բայց մորուքը ավե-
լի կարճ ու սև և ճիշտ մեջտեղից մի քիչ
սպիտակած: Աչքերն իրենց մեղուշ ու քաղցր
հանդարտությամբ անմիջապես կգրավեն
քեզ ու կհամակեն հոգիդ իրենց ազնվական
շնորհով:

Վսեմ ու անբացատրելի բան մը կծորի ի-
րովանդակ անձից. կլանված, խորին մի
հիացմունքով կդիտեմ այդ մարդուն, իրա-
պես պատկերի մը չափ առինքնող ու ներ-
դաշնակ: Կզգամ, որ անսովոր մեկն է, երբ
մանավանդ կլսեմ նրա ձայնը խորունկից ե-
կող արձագանքի մը պես տպավորիչ: Քիչ
հետո խորան կբարձրանա, այս անգամ ճեր-
մակ շուրջառի մը մեջ պարուրված, կարդա-
լու համար «Իղաքերից» Ավետարանը: Այդ
պահին կատարյալ վայելք մը կլինի զինք դի-
տել այդ դիրքի մեջ, վեղարի փայլուն սևը
ընկած շուրջառին ձյունափայլ ճերմակին
վրա՝ ակնախտիտ և գեղեցիկ մի հակասու-
թյամբ, վեղարին, որ կզգաս, թե խորհրդա-
վոր դարձնելու համար ստեղծված միակ գրի-
խանոցն է:

Տրտմանուշ ձայնով կկարդա անծանոթ
վարդապետը սրտալի ու անուշ մի պատմու-
թյուն:

Ահա և այդպես, հոգով, մտքով ու արտա-
քինով իսկապես վայելույ եկեղեցականը ան-
ծանոթ մնաց ինձ:

Օհ, որքան պիտի ուզեի վերապրիլ ծննդի
այդ անմոռանալի առավոտը, նորից տեսնե-
լու խորից պլպլացող լուսեղ ու քաղցր նայ-
վածքով սիրալի վանականը իր ձյունափայլ
շուրջառով:

Մերթ ընդ մերթ կհիշեմ նրան, և արցունքի
անանուն մի հուզմունք կողողի իմ հոգին: Իմ
կյանքի ճանապարհին որպես ուղեցույց՝
կատարելագույն բաղձանք միշտ նա է եղել,
ու ես ձգտել եմ շարունակ նմանվել նրան, որ
իմ երազն է դարձել...